ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի որոշում
Վարչական գործ թիվ ՎԴ/9563/05/18
Նախագահող դատավոր՝ Ա. Սարգսյան
Դատավորներ՝ Ա. Բաբայան
Ա. Պողոսյան

Վարչական գործ թիվ **ՎԴ/9563/05/18**
2024թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի վարչական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան) հետևյալ կազմով՝

նախագահող Հ. ԲԵԴԵՎՅԱՆ
զեկուցող Լ. ՀԱԿՈԲՅԱՆ
Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ

2024 թվականի հուլիսի 04-ին,

գրավոր ընթացակարգով քննելով Ռուբիկ Հովհաննիսյանի վճռաբեկ բողոքը ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 01.07.2022 թվականի որոշման դեմ՝ վարչական գործով ըստ հայցի Ռուբիկ Հովհաննիսյանի ընդդեմ Անշարժ գույքի կադաստրի կոմիտեի, երրորդ անձինք՝ Գեղամ Բալասանյան, Գյուլիզար Հովհաննիսյան՝ վարչական ակտն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Ռուբիկ Հովհաննիսյանը պահանջել է անվավեր ճանաչել Գեղամ Բալասանյանի անվամբ 01-003-0125-0028 կադաստրային ծածկագրով հողամասի նկատմամբ 05.05.2018 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

ՀՀ վարչական դատարանի (դատավոր՝ Մ. Մելքումյան) (այսուհետ՝ Դատարան) 04.09.2019 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) 01.07.2022 թվականի որոշմամբ Ռուբիկ Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 04.09.2019 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել Ռուբիկ Հովհաննիսյանը (ներկայացուցիչ՝ Լուսնթագ Բեժանյան):

Վճռաբեկ բողոքի պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Վերաքննիչ դատարանը խախտել է ՀՀ Սահմանադրության 5-րդ, 10-րդ և 60-րդ հոդվածները, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 5-րդ, 163-րդ, 197-րդ, 199-րդ և 209-րդ հոդվածները, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 12-րդ, 13-րդ, 24-րդ և 27-րդ հոդվածները, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ և 63-րդ հոդվածները, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ, 27-րդ, 65-րդ, 88-րդ, 114-րդ և 124-րդ հոդվածները, 01.01.1965 թվականին ուժի մեջ մտած և 01.01.1999 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 95-րդ, 106-րդ և 117-րդ հոդվածները, Հայկական ԽՍՀ հողային օրենսգրքի 84-րդ հոդվածը, 15.03.1991 թվականին ուժի մեջ մտած և 15.06.2001 թվականին ուժը կորցրած ՀՀ հողային օրենսգրքի 9-րդ հոդվածը:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանել է հետևյալ փաստարկներով.

Վերաքննիչ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ Արաբկիր, Վ. Համբարձումյան փողոց 59 հասցեի անշարժ գույքի գրանցամատյանների գրառումների համաձայն՝ գրանցումներն իրականացված են շենք, շինությունների մասով և հողամասի մասով՝ առանձին: Եվ հողամասի վերաբերյալ բաժնում՝ բաժին երկրորդ, ենթաբաժին առաջին, հստակ կատարված է գրառում այն մասին, որ սեփականատիրոջ անունն է Ազնիվ Մանուկյան 3/4, իրավունքի տեսակը՝ ընդհանուր սեփականություն, որպես գրանցման ամսաթիվ նշված է 24.09.2001 թվականը, որից հետո կատարված է հաջորդ գրանցումը կրկին հողամասի բաժնում, այսինքն՝

վերաբերում է հողամասին, և նշված է Ազնիվ Մանուկյան, ընդհանուր սեփականություն, իրավունքը հաստատող փաստաթղթի անվանումը՝ ՊՆ03-10-01թ., 2-2490: Նույն գրանցամատյանի լրացուցիչ տեղեկություններ բաժնում նշված է Գեղամ Բալասանյան 1/4, որն այնուհետև ջնջվել է, քանի որ վերջինս նոր պետական գրանցման ժամանակ այլևս չի հանդիսացել գրանցված իրավունքի սուբյեկտ:

Գրանցամատյանի ուսումնասիրությունից ավելի քան հստակ և պարզորոշ երևում է, որ 03.10.2001 թվականի նվիրատվության պայմանագրի հիման վրա կատարվել են նոր պետական գրանցումներ ինչպես շինությունների, այնպես էլ՝ հողամասի մասով, մասնավորապես, գրանցամատյանի երկրորդ բաժնի 1-ին ենթաբաժնում՝ հողամասի իրավունքի ձեռքբերում և դադարում բաժնում հստակ երևում է, որ 03.10.2001 թվականի պայմանագրի հիմքով կատարվել է նոր գրանցում, և, որ հատկանշական է Գեղամ Բալասանյանն այլևս նշված չէ որպես իրավունքի սուբյեկտ: Վերջինիս անունը բացակայում էր նաև լրացուցիչ տեղեկություններ բաժնում:

Բացի այդ, ստորադաս դատարաններն անտեսել են այն հանգամանքը, որ Գեղամ Բալասանյանի անվամբ սեփականության իրավունքի գրանցման համար հիմք է հանդիսացել միայն Երքաղխորհրդի գործկոմի 03.11.1995 թվականի թիվ 41/5 որոշումը, որը վերաբերում է սոսկ շինությանը, այլ ոչ թե հողամասին, և որպիսի հանգամանքը հստակ նշված է սեփականության իրավունքի գրանցման վկայականում:

Վերոգրյալի հիման վրա՝ բողոք բերած անձը պահանջել է բեկանել Վերաքննիչ դատարանի 01.07.2022 թվականի որոշումը և գործն ուղարկել նոր քննության:

<u>3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.</u>

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1) Երևանի քաղաքային խորհրդի գործկոմի 03.11.1995 թվականի ինքնակամ կառուցված շինությունների հաշվառման, գույքագրման և գրանցման մասին թիվ 41/5 որոշման համաձայն՝ որոշվել է թույլատրել Երքաղխորհրդի գործկոմի շենքերի և շինությունների գույքագրման և անձնագրավորման վարչությանը՝ որպես սեփականություն կամ ինքնակամ կառույց հաշվառել, գույքագրել և գրանցել քաղաքացիների կողմից ինքնակամ կառուցված (օգտագործվող) շինությունները հավելվածով, սահմանված կարգով գրանցել նաև կից օգտագործվող հողամասերը, որպես սեփականություն կամ դրանց նկատմամբ մշտական օգտագործման իրավունքը: Որոշման հավելվածի համաձայն՝ Գեղամ Էդուարդի Բալասանյանի անվան դիմաց կատարված նշումների համաձայն՝ սեփականության իրավունքով տրամադրվող շինությունների մակերեսը՝ 202,5քմ, նախկինում տրամադրված հողամասի մակերեսը՝ 506քմ, հողամասի ընդհանուր մակերեսը՝ 506քմ (**հատոր 1-ին, գ.թ. 109-110):**

2) Թիվ Ա 011217 սեփականության վկայագրի համաձայն՝ Գայդարի փողոց 59 տուն հասցեում գտնվող բնակելի տան նկատմամբ գրանցվել է Գեղամ Բալասանյանի սեփականության իրավունքը: Գրանցման համար հիմք է հանդիսացել Երևանի քաղաքային խորհրդի գործկոմի 03.11.1995 թվականի թիվ 41/5 որոշումը (**հատոր 1-ին, գ.թ. 8):**

3) Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 492999 վկայականի համաձայն՝ 24.01.2001 թվականի Երևան, Արաբկիր, Գայդարի փողոց 59 բնակելի տան նկատմամբ գրանցվել է Ազնիվ Մանուկյանի (3/4 մաս) և Գեղամ Բալասանյանի (1/4 մաս) սեփականության իրավունքը: Գրանցման համար հիմք է հանդիսացել պետ. նոտարի 08.09.1983 թվականի թիվ 1-14467 բնակելի տան մասի նվիրատվության պայմանագիրը (**հատոր 1-ին, գ.թ. 19-20):**

4) 03.10.2001 թվականի բնակելի տան մասի նվիրատվության պայմանագրի համաձայն՝ Գեղամ Բալասանյանն Ազնիվ Մանուկյանին է նվիրել Գայդարի փողոց թիվ 59 բնակելի տան իրեն պատկանող 1/4 մասը (**հատոր 2-րդ, գ.թ. 64):**

5) Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 493375 վկայականի համաձայն՝ 18.10.2001 թվականին Երևան, Արաբկիր, Գայդարի փողոց 59 բնակելի տան նկատմամբ գրանցվել է Ազնիվ Մանուկյանի սեփականության իրավունքը: Գրանցման համար հիմք է հանդիսացել պետ. նոտարի 03.10.2001 թվականի թիվ 2-2490 բնակելի տան մասի նվիրատվության պայմանագիրը: Վկայականի՝ «հողամասի տվյալները» բաժնում՝ որպես իրավունքի տեսակ, նշված է ընդհանուր սեփականություն **(հատոր 1-ին, գ.թ. 14-15):**

6) 12.04.2011 թվականի ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրի համաձայն՝ հավասար բաժիններով Ազնիվ Մանուկյանի ժառանգ են հանդիսանում Հովհաննես Հովհաննիսյանը և Ռուբիկ Հովհաննիսյանը: Անշարժ գույքը բաղկացած է Արաբկիր համայնքի, Գայդարի փողոց 59 հասցեում գտնվող անշարժ գույքից, որը ժառանգատուին է պատկանում 18.10.2001 թվականին տրված թիվ 493375 վկայականով: Ամբողջ անշարժ գույքը բաղկացած է 136.2քմ բնակելի տնից, 0,0509հա ընդհանուր սեփականություն հանդիսացող հողամասից, 21.0քմ ավտոտնակից **(հատոր 1-ին, գ.թ. 68):**

7) Երևանի քաղաքապետի 04.11.2013 թվականի թիվ 5430-Ա որոշմամբ 12.04.2011 թվականի ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրով Ռուբիկ և Հովհաննես Հովհաննիսյաններին անցած ժառանգական գույքին՝ Գայդարի փողոցի 59 բնակելի տանը տրամադրվել է հասցե՝ Համբարձումյան փողոց 59/1 **(հատոր 1-ին, գ.թ. 121):**

8) Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 12112013-01-0022 վկայականի համաձայն՝ Երևան, Արաբկիր, Վ. Համբարձումյան փողոց 59/1 հասցեում գտնվող բնակելի տան նկատմամբ 12.11.2013 թվականին գրանցվել է Ռուբիկ Հովհաննիսյանի և Հովհաննես Հովհաննիսյանի ընդհանուր բաժնային

սեփականության իրավունքը: Վկայականի «Հողամասի բնութագիրը» բաժնում հողամասի մակերեսը նշվել է 0.0509հա, իսկ գրանցված իրավունքի տեսակը՝ ընդհանուր համատեղ սեփականություն **(հատոր 1-ին, գ.թ. 12, 120):**

9) Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 05052018-01-0079 վկայականի համաձայն՝ Երևան, Արաբկիր, Վ. Համբարձումյան փողոց 59 հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ 05.08.2018 թվականին գրանցվել է Գեղամ Բալասանյանի սեփականության իրավունքը: Գրանցման համար հիմք է հանդիսացել Երքաղխորհրդի գործկոմի 03.11.1995 թվականի թիվ 41/5 որոշումը: Ըստ վկայականի՝ բնակելի տան մակերեսը կազմում է 193.6քմ: Առկա են նաև 55.7քմ մակերեսով ինքնակամ կառուցված շինություններ: 0.0509հա մակերեսով հողամասն ընդհանուր է Վ. Համբարձումյան փողոց 59/1 հասցեի հետ **(հատոր 1-ին, գ.թ. 11):**

10) Թիվ ՎԴ/9604/05/18 վարչական գործով դիմելով դատարան՝ Գյուլիզար Հովհաննիսյանը պահանջել է առ ոչինչ կամ անվավեր ճանաչել 05.05.2018 թվականին, համապատասխան գրանցամատյանում, Գեղամ Բալասանյանի անվամբ թիվ 01-003-0015-0228 ծածկագրի տակ, ք.Երևան, Վ.Համբարձումյան փողոց, թիվ 59 հասցեի գույքի նկատմամբ կատարված պետական գրանցումը և (կամ) գրանցման մատյանի գրառումը:

ՀՀ վարչական դատարանի 30.03.2022 թվականի վճռով հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 20.12.2023 թվականի որոշմամբ Ռուբիկ Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքը մերժվել է, և Դատարանի 30.03.2022 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

ՀՀ վճռաբեկ դատարանի վարչական պալատի 15.05.2024 թվականի որոշմամբ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 20.12.2023 թվականի (հրապարակված՝ 22.12.2023 թվականին) որոշման դեմ Ռուբիկ Հովհաննիսյանի բերած վճռաբեկ բողոքը թողնվել է առանց քննության:

<u>4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը պայմանավորված է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 161-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքի առկայությամբ, նույն հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի իմաստով, այն է՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, քանի որ Վերաքննիչ դատարանի կողմից թույլ է տրվել ՀՀ Սահմանադրության 5-րդ, 10-րդ և 60-րդ հոդվածների, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 5-րդ, 163-րդ, 197-րդ, 199-րդ և 209-րդ հոդվածների, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի 12-րդ, 13-րդ, 24-րդ և 27-րդ հոդվածների, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ և 63-րդ հոդվածների, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ,

27-րդ, 65-րդ, 88-րդ, 114-րդ և 124-րդ հոդվածների, 01.01.1965 թվականին ուժի մեջ մտած և 01.01.1999 թվականին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 95-րդ, 106-րդ և 117-րդ հոդվածների, Հայկական ԽՍՀ հողային օրենսգրքի 84-րդ հոդվածի, 15.03.1991 թվականին ուժի մեջ մտած և 15.06.2001 թվականին ուժը կորցրած ՀՀ հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի խախտում, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, որը, սակայն, հերքվում է ստորև նշված պատճառաբանությամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելուց հետո մեկ այլ վարչական գործով օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատվել են որոշակի փաստեր, որոնք սույն գործով ունեն նախադատելի նշանակություն՝ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի նախադատելիության հատկանիշին՝ վերահաստատելով նախկինում արտահայտած իրավական դիրքորոշումները:

Օրինական ուժի մեջ մտած վերջնական դատական ակտերի պարտադիրության սկզբունքի արդյունավետ իրացումն իրավունքի գերակայության ցուցիչներից է և արդար դատաքննության իրավունքի կարևոր բաղադրիչը:

Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (այսուհետ՝ Վենետիկի հանձնաժողով) կողմից ընդունված «Իրավունքի գերակայության հսկիչ ցանկը», ի թիվս այլնի, Եվրոպայի խորհրդի մասնակից պետություններում իրավունքի գերակայության գնահատման չափանիշ է դիտարկում իրավական որոշակիությունը, որի դրսևորումներից է res judicata սկզբունքը:

Վենետիկի հանձնաժողովի «Իրավունքի գերակայության մասին զեկույցի» (ընդունված 2011 թվականին մարտի 25-26) (CDL-AD(2011)003rev) 46-րդ կետի համաձայն՝ իրավական որոշակիությունը պահանջում է հարգել res judicata սկզբունքը, ըստ որի՝ ի թիվս այլնի, ներպետական դատարանների վերջնական դատական ակտերը չպետք է կասկածի տակ դրվեն:

Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի «Դատական ակտերի կատարման մասին» 09.09.2003 թվականի Rec(2003)17 հանձնարարականում ամրագրված է. «Մասնակից պետություններն ունեն պարտականություն՝ երաշխավորելու վերջնական և պարտադիր դատական ակտերի կատարումը»: Հանձնարարականի «Կատարման ընթացակարգերը» բաժնի 1.b կետի համաձայն՝ որպեսզի կատարման ընթացակարգը լինի հնարավորինս արդյունավետ, դատական ակտերը պետք է կատարվեն կիրառելի օրենքներին ու դատական ակտերին համապատասխան: Ցանկացած օրենք պետք է լինի բավարար չափով մանրամասն՝ ապահովելու համար գործընթացի որոշակիությունն ու թափանցիկությունը, կանխատեսելիությունն ու արդյունավետությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ իրավական որոշակիության սկզբունքի բովանդակության մեջ ներառվում են, ի թիվս այլնի, նաև հետևյալ դրույթները.

- դատարանների կողմից կայացված վերջնական, այսինքն՝ օրինական ուժի մեջ մտած որոշումները ենթակա չեն վերանայման,

- անթույլատրելի է դատարանի կողմից արդեն մեկ անգամ լուծված գործի կրկնակի քննություն,

- կողմերից ոչ մեկը չի կարող պահանջել վերջնական, այսինքն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի վերանայում միայն կրկնակի քննության իրականացման և նոր ակտի կայացման նպատակով,

- վերանայումը չի կարող լինել բողոքարկման քողարկված ձև, իսկ գործի նկատմամբ կողմերի հակադիր հայացքների առկայությունն ինքնին չի կարող հիմք ծառայել վերջնական դատական ակտի վերանայման համար *(տե՛ս, Գայանե Վարդանյանն ընդդեմ Վարդան Վարդանյանի և մյուսների թիվ ԱՐԴ/0062/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը):*

Վերոգրյալի համատեքստում ՀՀ վճռաբեկ դատարանը մեկ այլ որոշմամբ հավելել է, որ իրավական որոշակիության սկզբունքը, ըստ էության, երաշխավորում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կայունությունը, ինչը, ի թիվս այլ հատկանիշների (անհերքելիություն, բացառիկություն, նախադատելություն), ենթադրում է այդպիսի դատական ակտի պարտադիրությունը: Դատական ակտի պարտադիրության հատկանիշը նշանակում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, իրավաբանական անձինք և քաղաքացիներն իրենց գործունեության ընթացքում պարտավոր են հաշվի առնել օրինական ուժի մեջ մտած դատական ակտը և իրավունք չունեն տվյալ դատական ակտով կայացված հարցի վերաբերյալ կայացնելու նոր որոշում *(տե՛ս, Լուսինե Խլղաթյանն ընդդեմ Վահան Խլղաթյանի և մյուսների թիվ ԼԴ/0916/02/10 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը):*

Վերը նշված իրավական փաստաթղթերին ու դիրքորոշումներին համահունչ՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածն ամրագրում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի պարտադիրության սկզբունքը: Նշված հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը պարտադիր են դրանց հասցեատերերի համար: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը չկատարելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:

Նշված նորմերն առաջին հերթին ամրագրում են օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրության հատկանիշը: Այնուհետև՝ հստակեցնում են այն սուբյեկտների շրջանակը, որոնց վրա տարածվում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի գործողությունը. այդ սուբյեկտները տվյալ դատական ակտի

հասցեատերերն են: Միաժամանակ՝ որպես օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի կատարումն ապահովող իրավական երաշխիք՝ օրենսդիրը նախատեսում է պատասխանատվություն դատական ակտը չկատարելու համար: Օրինական ուժի մեջ մտած դատական ակտով սահմանված պահանջը դրա հասցեատերերի կողմից չկատարելը կամ այդ պահանջին չհամապատասխանող վարքագիծը ոչ իրավաչափ վարքագիծ է, որն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն: Այսպիսով, օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրության հատկանիշի դրսևորումը նախևառաջ դրա հասցեատերերի՝ դատական ակտը կատարելու պարտականությունն է:

Օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի պարտադիրության հատկանիշի դրսևորումը չի սահմանափակվում միայն դրա հասցեատերերի կողմից դատական ակտի եզրափակիչ մասի պահանջը կատարելու պարտականությամբ. օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրության հատկանիշն ունի նաև այլ դատավարական դրսևորումներ:

Օրինական ուժի մեջ մտած վճիռների պարտադիր իրավաբանական ուժի դրսևորում է, ի թիվս այլնի, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի նորմի կարգավորումը: Վերջինս ամրագրում է. «Նախկինում քննված քաղաքացիական կամ վարչական գործով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած՝ գործն ըստ էության լուծող դատական ակտով հաստատված փաստերը միևնույն կողմերի մասնակցությամբ սույն օրենսգրքով նախատեսված որևէ գործ քննելիս վերստին ապացուցման կարիք չունեն»: Այս նորմի բովանդակությունից բխում է, որ դատավարության մասնակիցներն այլևս չեն կարող կասկածի տակ դնել, վիճարկել օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված փաստերը. նրանց կողմից այդ փաստերը չեն կարող վիճարկվել իրենց մասնակցությամբ այլ դատական գործերի շրջանակներում, և ունեն նախադատելի նշանակություն այլ դատական գործերի համար: Այսինքն՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված փաստերն այլևս անվիճելի փաստեր են, և դատական ակտի պարտադիրությունը, ի թիվս այլնի, դատավարության կողմերից պահանջում է միմյանց հետ իրավահարաբերություններում այսուհետ անվերապահորեն հիմք ընդունել դատարանի օրինական ուժի մեջ մտած ակտով հաստատված փաստերը (*տե՛ս, թիվ ՎԴ3/0037/05/18 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.11.2022 թվականի որոշումը):*

ՀՀ սահմանադրական դատարանը, անդրադառնալով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի իրավակարգավորմանը, արձանագրել է. «(...) նախադատելիությունը ենթադրում է վարչական գործով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած՝ գործն ըստ էության լուծող դատական ակտով հաստատված փաստերը հետագայում քննվող վարչական գործով ապացուցելու պարտականությունից ազատում որոշակի սահմաններում, ինչպես նաև բացառում է այդ

փաստերը հետագայում քննվող վարչական գործի շրջանակներում հերքելու հնարավորությունը: (...) վարչական դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած՝ գործն ըստ էության լուծող դատական ակտով հաստատված փաստերը, անկախ դատարանի կողմից քննվող վեճին տրված լուծումից, կարող են կանխորոշիչ նշանակություն ունենալ նույն անձանց մասնակցությամբ հետագայում քննվող վարչական և քաղաքացիական գործերի լուծման համար *(տե՛ս, ՀՀ սահմանադրական դատարանի 02.03.2021 թվականի թիվ ՍԴՈ-1579 որոշումը):*

Օրինական ուժի մեջ մտած դատական ակտին բնորոշ նախադատելիության հատկանիշի և դատական ակտի պարտադիրության սկզբունքի միջև կապը շեշտադրվել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից: Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ «...իրավական որոշակիության սկզբունքը, ըստ էության, երաշխավորում է օրինական ուժի մեջ մտած դատական ակտի կայունությունը, ինչը, ի թիվս այլ հատկանիշների (անհերքելիություն, բացառիկություն, նախադատելություն), ենթադրում է այդպիսի դատական ակտի պարտադիրությունը: Պարտադիրության հատկանիշն անմիջականորեն բխում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի իրավակարգավորումից և ենթադրում է, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, իրավաբանական անձինք և քաղաքացիներն իրենց գործունեության ընթացքում պարտավոր են հաշվի առնել օրինական ուժի մեջ մտած դատական ակտը և իրավունք չունեն տվյալ դատական ակտով կայացված հարցի վերաբերյալ կայացնելու նոր որոշում» *(տե՛ս, թիվ ԵԱԴԴ/0913/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 25.12.2015 թվականի որոշումը)*:

ՀՀ վճռաբեկ դատարանը նշել է, որ գործին մասնակցող անձանց համար նախադատելիությունը նշանակում է որոշակի սահմաններում ապացուցման պարտականությունից ազատում, ինչպես նաև կրկնակի ապացուցման կամ նման հանգամանքները հետագա դատավարություններում հերքելու արգելք: Նախադատելիությունը դատարանի համար ենթադրում է պարտականություն՝ ներմուծելու նման հանգամանքը նոր կայացվող դատական ակտում:

Որպես կանոն, դատական ակտերի պրեյուդիցիալ կապը ենթադրում է դատական ակտի նախադատելիության տարածում ամբողջ ծավալով թե՛ գործին մասնակցող անձանց, թե՛ դատարանի վրա (...): Հետևաբար, նախադատելիությունը օրենքի ուժով միանշանակ կանխորոշիչ դերակատարություն է ունենում նոր դատական ակտի համար, իսկ գործին մասնակցող անձանց կամքը և դատական հայեցողությունն այս հարցում ազդեցություն չունեն: Դատական ակտի պրեյուդիցիալ կապի կամ նախադատելիության օբյեկտիվ սահմանները որոշվում են հանգամանքների այն շրջանակով, որոնք պետք է հաստատված լինեն օրինական ուժի մեջ մտած դատական ակտով և ենթակա չեն կրկին ապացուցման կամ հերքման այլ գործ քննելիս *(տե՛ս, «Սաթնէ» ՍՊԸ-ն ընդդեմ Աշոտ և*

Հենրիկ Այվազյանների թիվ 3-93(ՎԴ) քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 29.02.2008 թվականի որոշումը):

ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ վարչական գործով կայացված վճիռը, ուժի մեջ մտնելով, ի թիվս այլ հատկանիշների (պարտադիրություն, անհերքելիություն, կատարելիություն), ձեռք է բերում նաև նախադատելիության հատկանիշ, որի հիման վրա էլ այդ դատական ակտով հաստատված փաստերը նույն կողմերի միջև (անձանց մասնակցությամբ) նոր վարչական կամ քաղաքացիական գործ քննելիս, որպես ընդհանուր կանոն, պարտադիր նշանակություն են ունենում դատավարության մասնակիցների և դատարանի համար և ներմուծվում են նոր կայացվող դատական ակտում՝ որպես այլևս ապացուցման կարիք չունեցող փաստեր: Հետևաբար վճռով վարչական դատարանի կողմից որոշակի փաստերի հաստատումը դատավարության մասնակիցների համար էական նշանակություն կարող է ունենալ ոչ միայն տվյալ վարչական գործի ելքի վրա դրանց ունեցած ազդեցության ուժով, այլև այն կարող է ազդել նրանց մասնակցությամբ վարչական կամ քաղաքացիական այլ գործով ապացուցման ենթակա փաստերի շրջանակի որոշման վրա՝ դրանց կազմից բացառելով նախադատելի փաստերը (*տե՛ս, Ներսես, Խաչատուր, Սերգեյ Հակոբյաններն և Էլեոնորա Մաիլովան ընդդեմ Երևան համայնքի թիվ ՎԴ/6829/05/14 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 21.05.2021 թվականի որոշումը):*

Հիմք ընդունելով ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի վերն արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասում «միևնույն կողմերի» ձևակերպումն անհրաժեշտաբար չի ենթադրում հայցվորների և պատասխանողների համընկնում: Նշված նորմում «միևնույն կողմեր» ձևակերպման ներքո հարկ է հասկանալ «դատավարության միևնույն մասնակիցներին»՝ հաշվի առնելով, որ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պարտադիրությունը վերաբերում է ինչպես կողմերին, այնպես էլ դատավարության մյուս մասնակիցներին՝ երրորդ անձանց:

Նման մեկնաբանությունն արդարացված է, քանի որ դատական պրակտիկայում հանդիպում են իրավիճակներ, երբ վեճի կողմերը, ցանկանալով վերաբացել նախկինում քննված գործը, ձևականորեն փոփոխում են դատավարության մասնակիցների դատավարական կարգավիճակը և նոր հայց հարուցում:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասը կիրառելի է ոչ միայն այն դեպքում, երբ հայցվորի և պատասխանողի կարգավիճակում հանդես եկող անձինք նույնական են, այլ նաև այն դեպքում, երբ համընկնում է դատավարության մասնակիցների կազմը՝ անկախ այդ մասնակիցների կարգավիճակից: Մասնավորապես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասը կիրառելի է նաև այն դեպքում, երբ նախկինում

քննված վարչական գործով հայցվորը և երրորդ անձը հետագայում մեկ այլ վարչական գործով հանդես են գալիս այլ կարգավիճակում. առաջինը՝ երրորդ անձի, երկրորդը՝ հայցվորի կարգավիճակում:

Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման կիրառումը սույն գործի փաստերի նկատմամբ.

Սույն գործով հայցվոր Ռուբիկ Հովհաննիսյանը, դիմելով Դատարան, խնդրել է անվավեր ճանաչել Գեղամ Բալասանյանի անվամբ 01-003-0125-0028 կադաստրային ծածկագրով հողամասի նկատմամբ 05.05.2018 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը:

Դատարանը, 04.09.2019 թվականի վճռով մերժելով Ռուբիկ Հովհաննիսյանի հայցը, գտել է, որ *«(...) անշարժ գույքի պատկանելության փոփոխությունը պայմանավորված էր միայն շինությամբ, այսինքն՝ գործարքով օտարվել է միայն շինության՝ Գեղամ Բալասանյանին պատկանող բաժինը և վերջինս պահպանել է այդ գույքի նկատմամբ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը»:* Ըստ այդմ՝ բացակայել են Գեղամ Բալասանյանի անվամբ 01-003-0125-0028 կադաստրային ծածկագրով հողամասի նկատմամբ 05.05.2018 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու հիմքերը:

Վերաքննիչ դատարանը, 01.07.2022 թվականի որոշմամբ մերժելով Ռուբիկ Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքը, հիմնավոր է համարել Դատարանի պատճառաբանությունները, և արձանագրել է, որ «*Ազնիվ Մանուկյանի և Գեղամ Բալասանյանի միջև 03.10.2001 թվականին կնքված «Բնակելի տան մասի նվիրատվության պայմանագրի» բովանդակությունը չի պարունակում որևէ դրույթ Գեղամ Բալասանյանին 24.09.2001 թվականի թիվ 492999 սեփականության իրավունքի վկայականով պատկանող Գայդարի փողոց 59 տուն հասցեում գտնվող 509քմ հողամասի (իրավունքի տեսակը՝ ընդհանուր սեփականություն) իրեն պատկանող մասի նվիրատվության մասին»:*

Սույն գործով դատավարության մասնակիցներն են Ռուբիկ Հովհաննիսյանը՝ հայցվորի, Անշարժ գույքի կադաստրի կոմիտեն՝ պատասխանողի, Գեղամ Բալասանյանը և Գյուլիզար Հովհաննիսյանը՝ երրորդ անձանց կարգավիճակում:

Հայցի առարկան Գեղամ Բալասանյանի անվամբ 01-003-0125-0028 կադաստրային ծածկագրով հողամասի նկատմամբ 05.05.2018 թվականին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջն է:

Ռուբիկ Հովհաննիսյանի կողմից հայցը ներկայացվել է հետևյալ հիմքերով.

1. Գեղամ Բալասանյանի անվամբ վեճի առարկա հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում չէր կարող կատարվել, քանի որ այդ հողամասի նկատմամբ արդեն իսկ գրանցված է եղել Հովհաննես Հովհաննիսյանի և

Ռուբիկ Հովհաննիսյանի սեփականության իրավունքը: Վեճի առարկա հողամասի նկատմամբ գրանցված սեփականության իրավունք ունեցել են բացառապես Հովհաննես և Ռուբիկ Հովհաննիսյանները:

2. Ռուբիկ Հովհաննիսյանի անվամբ իրավունքի պետական գրանցումը կատարվելու պահից չեղարկվել են նախկին գրանցումները:

3. Վիճարկվող իրավունքի պետական գրանցման համար հիմք է հանդիսացել միայն Երքաղխորհրդի գործկոմի 03.11.1995 թվականի թիվ 41/5 որոշումը, մինչդեռ նշված որոշումը վերաբերում է սոսկ շինությանը, բայց ոչ հողամասին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ միևնույն իրավական վեճը քննության առարկա է դարձել թիվ ՎԴ/9604/05/18 վարչական գործի շրջանակներում:

Թիվ ՎԴ/9604/05/18 վարչական գործով ՀՀ վարչական դատարանը 30.03.2022 թվականի վճռով (նոր քննության վարույթ) մերժել է Գյուլիզար Հովհաննիսյանի հայցը, որով վերջինս պահանջել է առ ոչինչ կամ անվավեր ճանաչել Կոմիտեի կողմից 05.05.2018 թվականին, համապատասխան գրանցամատյանում, Գեղամ Բալասանյանի անվամբ թիվ 01-003-0015-0228 ծածկագրի տակ, ք.Երևան, Վ.Համբարձումյան փողոց, թիվ 59 հասցեի գույքի նկատմամբ կատարված պետական գրանցումը և (կամ) գրանցման մատյանի գրառումը: Նշված վճիռը բողոքարկման արդյունքում մնացել է անփոփոխ և մտել է օրինական ուժի մեջ:

Նշված գործով դատավարության մասնակիցներն են Գյուլիզար Հովհաննիսյանը՝ հայցվորի, Անշարժ գույքի կադաստրի կոմիտեն՝ պատասխանողի, Գեղամ Բալասանյանը և Ռուբիկ Հովհաննիսյանը՝ երրորդ անձանց կարգավիճակում:

ՀՀ վարչական դատարանը (դատավոր՝ Աղասի Դարբինյան) գործի նոր քննության վարույթի արդյունքում 30.03.2022 թվականի վճռով հայցը մերժել է հետևյալ հիմնավորմամբ. «(...) վիճելի իրավունքի պետական գրանցման պահին Հայաստանի Հանրապետության ժողովրդական պատգամավորների Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 03.11.1995 թվականի թիվ 41/5 որոշման հիման վրա ք.Երևան, Վ.Համբարձումյան փողոց, թիվ 59 հասցեում գտնվող բնակելի տան նկատմամբ արդեն իսկ ծագած է եղել Գեղամ Էդուարդի Բալասանյանի սեփականության իրավունքը, իսկ նույն հասցեում գտնվող 509քմ մակերեսով հողամասի նկատմամբ վերջինի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքը գրանցված է եղել դեռևս 2001 թվականին և այդ բնակելի տան և հողամասի նկատմամբ սույն վարչական գործով վիճարկվող վարչական ակտի կայացման պահին Գեղամ Էդուարդի Բալասանյանի համապատասխանաբար՝ սեփականության և ընդհանուր համատեղ սեփականության իրավունքները դադարած չեն եղել», «Անդրադառնալով երրորդ անձ Ռուբիկ Հայկի Հովհաննիսյանի ներկայացուցչի այն փաստարկին, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 209-րդ հոդվածի ուժով երրորդ անձ Գեղամ Էդուարդի Բալասանյանի

կողմից իրեն պատկանող բնակելի տան 1/4-րդ մասն Ազնիվ Արմենակի Մանուկյանին նվիրելու արդյունքում այդ շինությամբ ծանրաբեռնված հողամասի նկատմամբ իրավունքը նույնպես անցել է նվիրառուին, ապա, հաշվի առնելով այն փաստը, որ նշված գործարքի կայացման պահին վիճելի հողամասը չի հանդիսացել բաժնային սեփականություն և առանձնացված չի եղել, հետևաբար՝ բնության մեջ յուրաքանչյուրին պատկանող հողամասի չափն ու սահմանները որոշված չեն եղել, այլ, վերոնշյալ հիմնավորումներով, վերջիններիս է պատկանել ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով՝ Դատարանը գտնում է, որ այդ պայմաններում նշված փաստարկը ևս անհիմն է և չի կարող հիմք հանդիսանալ վիճարկվող պետական գրանցումն անվավեր ճանաչելու համար: Ընդ որում, Դատարանի գնահատմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 209-րդ հոդվածով սահմանված կարգավորումները կարող են հաշվի առնվել համատեղ սեփականություն իրավունքով պատկանող գույքի բաժինների առանձնացման հարցի լուծման շրջանակներում»: «(...) վիճարկվող պետական գրանցման կատարումը բխել է ինչպես կադաստրային գործի նյութերից, այնպես էլ գործող իրավակարգավորումների պահանջներից, այսինքն՝ վիճարկվող պետական գրանցումը կատարելով՝ պատասխանողն իրականացրել է իրավահաստատող փաստաթղթերով սահմանված իրավունքների ծավալի շրջանակներում իրավունքի պետական գրանցում կատարելու իր պարտականությունը՝ դրանով պաշտպանելով Գեղամ Էդուարդի Բալասանյանի սեփականության իրավունքի անձեռնմխելիությունն ու ապահովելով երաշխիք՝ վերջինին սեփականության իրավունքով պատկանող գույքերի անխոչընդոտ տիրապետման, օգտագործման և տնօրինման համար, ուստի Դատարանը գտնում է, որ առկա չեն Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից 05.05.2018 թվականին, համապատասխան գրանցամատյանում, Գեղամ Էդուարդի Բալասանյանի անվամբ, թիվ 01-003-0015-0228 ծածկագրի տակ, ք.Երևան, Վ.Համբարձումյան փողոց, թիվ 59 հասցեի գույքի նկատմամբ կատարված պետական գրանցումը և/կամ գրանցման մատյանի գրառումն անվավեր ճանաչելու հիմքեր»:

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը (նախագահող դատավոր՝ Ա. Հարությունյան, դատավորներ՝ Ռ. Խանդանյան, Է. Նահապետյան) 20.12.2023 թվականի որոշմամբ մերժել է Ռուբիկ Հովհաննիսյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը՝ հետևյալ պատճառաբանությամբ. «(...) Տվյալ դեպքում ՀՀ կադաստրի կոմիտեն, հանդիսանալով ծագած իրավունքները գրանցող պետական մարմին, իրականացրել է իր վրա օրենսդրությամբ դրված պարտականությունը, կատարել է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում՝ հիմքում դնելով այն հանգամանքը, որ Գեղամ Բալասանյանին է պատկանում ք. Երևան, Արաբկիր, Վ. Համբարձումյան 59 փողոցում գտնվող անշարժ գույքը՝ Երքաղխորհրդի գործկոմի 03.11.1995թ. թիվ 41/5 որոշման հիման վրա, և հաշվի առնելով այն փաստը, որ Հայաստանի Հանրապետության

ժողովրդական պատգամավորների Երևանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 03.11.1995 թվականի թիվ 41/5 որոշումը և 24.09.2001 թվականին Գեղամ Էդուարդի Բալասանյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումն օրենքով սահմանված կարգով ոչ իրավաչափ կամ ուժը կորցրած չեն, որպիսի պայմաններում, ելնելով վարչական ակտի իրավաչափության կանխավարկածի սկզբունքից, վերոնշյալ վարչական ակտերը համարվում են իրավաչափ:

(...) Սույն դեպքում՝ 03.10.2001 թվականի թիվ 2-2490 բնակելի տան մասի նվիրատվության պայմանագրի հիման վրա ք. Երևան, Արաբկիր համայնք, Գայդարի փող. թիվ 59 բնակելի տան նկատմամբ 18.10.2001 թվականին գրանցվել է Ազնիվ Մանուկյանի սեփականության իրավունքը, իսկ նույն հասցեում գտնվող 0.0509 հա հողամասը գրանցվել է ընդհանուր սեփականություն: Ազնիվ Մանուկյանի մահից հետո 12.04.2011 թվականի ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրով Ազնիվ Մանուկյանի ժառանգական գույքը, որը իր մեջ ներառում է նաև վերջինիս և Գեղամ Բալասանյանին ընդհանուր սեփականությամբ պատկանող 0.0509 հողամասը, իրավահաջորդ են նշվել Հովհաննես Հայկի Հովհաննիսյանը և Ռուբիկ Հայկի Հովհաննիսյանը: Այսինքն՝ նշված գույքի նկատմամբ Հովհաննես Հովհաննիսյանը և Ռուբիկ Հովհաննիսյանը ձեռք են բերել միայն ընդհանուր համատեղ սեփականություն Գեղամ Բալասանյանի հետ միասին»:

Վճռաբեկ դատարանը քննության առարկա վարչական գործով և թիվ ՎԴ/9604/05/18 վարչական գործով հայցերի առարկաների և հիմքերի ուսումնասիրության արդյունքում արձանագրում է, որ երկու գործերի առանցքում միևնույն իրավական վեճն է, և երկու գործերով էլ վեճերի լուծման համար էական նշանակություն ունեցող պարզման ենթակա փաստական հանգամանքները հետևյալն են.

- արդյո՞ք վիճարկվող իրավունքի պետական գրանցումը կատարելու պահին Գեղամ Բալասանյանը հանդիսացել է վեճի առարկա՝ թիվ 01-003-0015-0228 ծածկագրի տակ, ք. Երևան, Վ.Համբարձումյան փողոց, թիվ 59 հասցեի 509քմ հողամասի համասեփականատեր,

- արդյո՞ք վիճարկվող գրանցումը կատարելու պահի դրությամբ վեճի առարկա՝ թիվ 01-003-0015-0228 ծածկագրի տակ, ք. Երևան, Վ.Համբարձումյան փողոց, թիվ 59 հասցեի 509քմ հողամասի համասեփականատեր են հանդիսացել միայն Ռուբիկ և Հովհաննես Հովհաննիսյանները:

Թիվ ՎԴ/9604/05/18 վարչական գործով վերը նշված օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով ՀՀ վարչական դատարանի 30.03.2022 թվականի և ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 20.12.2023 որոշմամբ հաստատվել են քննության առարկա գործով վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերն առ այն, որ վիճարկվող իրավունքի պետական գրանցումը կատարելու պահին Գեղամ

Բալասանյանը հանդիսացել է վեճի առարկա՝ թիվ 01-003-0015-0228 ծածկագրի տակ, ք. Երևան, Վ.Համբարձումյան փողոց, թիվ 59 հասցեի 509քմ հողամասի համասեփականատեր, այդ հողամասի համասեփականատերեր են հանդիսացել ինչպես Ռուբիկ և Հովհաննես Հովհաննիսյանները, այնպես էլ երրորդ անձ Գեղամ Բալասանյանը:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ թեև երկու վարչական գործերով հայցվորները չեն նույնանում, այնուամենայնիվ, սույն գործով հայցվոր Ռուբիկ Հովհաննիսյանը թիվ ՎԴ/9604/05/18 վարչական գործով հանդես է եկել երրորդ անձի կարգավիճակում, և հակառակը: Ընդ որում՝ երկու գործերով էլ հայցվորներ Ռուբիկ Հովհաննիսյանի և Գյուլիզար Հովհաննիսյանի շահերն ամբողջությամբ նույնանում և համընկնում են: Ավելին, թիվ ՎԴ/9604/05/18 վարչական գործով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը վերը նշված որոշումը կայացրել է Ռուբիկ Հովհաննիսյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում: Հետևաբար, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առկա է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի նորմի կիրառման համար անհրաժեշտ փաստական հիմքը:

Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով վերը նշված փաստերը նախադատելի են սույն գործով վեճի լուծման համար և վերստին ապացուցման կարիք չունեն:

Ինչ վերաբերում է հայցվորի այն փաստարկին, որ վիճարկվող իրավունքի պետական գրանցման վարույթում չի ապահովվել իր մասնակցությունը և լսված լինելու իրավունքը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հայցվորի նշված փաստարկն անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները սահմանվում են օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով»:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը վերոհիշյալ դրույթով ամրագրել է այն սկզբունքը, համաձայն որի՝ «հատուկ օրենքը վերացնում է ընդհանուրի գործողությունը» (lex specialis derogat legi generali), ինչը նշանակում է, որ եթե գոյություն ունեն տվյալ տեսակի վարչական վարույթի առանձնահատկությունները կարգավորող հատուկ օրենքներ, ապա վարչական վարույթի նկատմամբ առաջին հերթին կիրառելի են այդ օրենքները, իսկ վարչական վարույթը կարգավորող ընդհանուր նորմերը կիրառելի են միայն հատուկ օրենքով չկարգավորված իրավահարաբերությունների նկատմամբ:

Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հետ կապված իրավահարաբերությունները կարգավորված են «Գույքի նկատմամբ իրավունքների

պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով: Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վարույթն առանձին տեսակի վարչական վարույթ է, որի առանձնահատկությունները սահմանված են «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով: Նշված օրենքի համակարգային վերլուծությունը վկայում է, որ իրավունքների պետական գրանցման վարույթի առանձնահատկություններից է, ի թիվս այլնի, այդ վարույթում լսումներ չանցկացնելը: Ըստ այդմ՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի ուժով սույն դեպքերում կիրառելի են «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի իրավակարգավորումները, որոնք իրավունքի պետական գրանցումը կատարող իրավասու մարմնի համար չեն նախատեսում վարչական լսումներ անցկացնելու և ենթադրյալ շահագրգիռ անձանց իրավունքի պետական գրանցման վարույթում ներգրավելու պարտականություն:

Վերոհիշյալի հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ առկա չէ վիճարկվող իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու որևէ հիմք, որպիսի պայմաններում Վճռաբեկ դատարանն իրացնում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ բողոքարկվող դատական ակտն անփոփոխ թողնելու լիազորությունը:

5. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումները դատական ծախսերի բաշխման վերաբերյալ.

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կողմը, որի դեմ կայացվել է վճիռ, կամ որի բողոքը մերժվել է, կրում է Հայաստանի Հանրապետության դատական դեպարտամենտի՝ վկաներին և փորձագետներին վճարած գումարների հատուցման պարտականությունը, ինչպես նաև մյուս կողմի կրած դատական ծախսերի հատուցման պարտականությունը այն ծավալով, ինչ ծավալով դրանք անհրաժեշտ են եղել դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար: Դատական պաշտպանության այն միջոցի հետ կապված ծախսերը, որ իր նպատակին չի ծառայել, դրվում են այդ միջոցն օգտագործած կողմի վրա, անգամ եթե վճիռը կայացվել է այդ կողմի օգտին:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Ռուբիկ Հովհաննիսյանի կողմից վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը վճարված լինելու պարագայում պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված՝ նկատի ունենալով, որ վերջինիս բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 169-171-րդ հոդվածներով, 172-րդ հոդվածի 1-ին մասով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վճռաբեկ բողոքը մերժել՝ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի 01.07.2022 թվականի որոշումը թողնել անփոփոխ:

2. Պետական տուրքի հարցը համարել լուծված:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և բողոքարկման ենթակա չէ:

Նախագահող ***Հ. ԲԵԴԵՎՅԱՆ***

Զեկուցող ***Լ. ՀԱԿՈԲՅԱՆ***

Ռ. ՀԱԿՈԲՅԱՆ